



Հայկական գիտահետազոտական հանգույց  
Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Մտեղծագործական համայնքներ  
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial  
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով  
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

**Share** — copy and redistribute the material in any medium or format

**Adapt** — remix, transform, and build upon the material

Հ. Ս. Խ. Հ. ՀՈՂԺՈՂԿՈՄԱՏ  
Ա.Գ.ՐՈՏԵՆԳՐՈՊ ՅԵՎ. Ա.ՆԱՍՆԱԳԱՀԱԿԱՆ ԱՆԿՏՈՐ

1021p

636.2.083.37



Հ Ր Ա Հ Ա Ն Գ  
ԽՈՇՈՐ ԿԵՂՋԵՐԱՎՈՐ ԸՆԸՍՈՒՆՆԵՐԻ  
Մ Ա Տ Ղ Ա Շ Ն Ե Ր Ն  
ԸՃԵՑՆԵԼՈՒ ՅԵՎ ԽՆԱՄԵԼՈՒ ՄԱՍԻՆ



•

1870

636. 2. 08. 3. 37

### Ա Ռ Ա Ջ Ա Բ Ա Ն

ՀԱՅԿԻ Ժողովուրդի և Հ. Կ. (Բ) Կ. Կենտկոմի 1933 թ. ապրիլի 11-ի «Անասնապահության զարգացման ձեռնարկումների մասին» վորոշման մեջ խնդիր և դրված առավելագույն չափով նվազեցնելու անասունների անկումը և ապահովել մատչելի պահպանում: Խորհրտնտեսություններում և կոլտնտեսություններում ընդլայնված վերարտադրության համար:

Սոցիալիստական անասնապահության զարգացման ներկա ետապում հոտի ընդլայնված վերարտադրության ապահովման աշխատանքները և հոտի վորակական ցուցանիշների բարձրացումը խորհրտնտեսություններում և կոլտնտեսություններում հանդիսանում և նրանց գործունեություն կենտրոնական խնդիրը:

Հոտի ընդլայնված վերարտադրության հարցի լուծումն ապահովող միջոցառումների կարևորագույն խնդիրներից մեկը հանդիսանում և խորհրտնտեսությունների և կոլտնտեսությունների սեփական ամբողջ աճի բուժումն ու մատղաշների խնամքի ապահովումը:


Դրա հետ միասին կոլտնտեսական անասնապահության ընդլայնված վերարտադրության համար անհրաժեշտ և, վոր պահպանվի նաև կոլտնտեսականների անձնական ոգտագործության առկ գտնված անասունների մատղաշը:

Մատղաշի բուժումն և մատղաշների պահպանումն որինակելի հիմքերի վրա դրված տասնյակ և հարյուրավոր կոլտնտեսությունների կողքին մենք ունենք նաև մի շարք կոլտնտեսություններ, վորտեղ այդ կարևորագույն աշխատանքը մատնված և ինքնահոսի և վորի հետևանքով հոտի ընդլայնված վերարտադրության տեմպերը չեն բավարարում պրոլետարական պետության պահանջներին:

Վերջ և մի շարք կոլտնտեսություններում մատղաշի բուժման ու պահպանման հետամնացություն գլխավոր պատճառը:

Մեր սոցիալիստական անասնապահության զարգացման տվյալ ետապում հիմնական և առավել բնորոշ առանձնահատկությունը հանդիսանում և այն, վոր կոլտնտեսական լայն մասսաները բավականաչափ չեն տիրապետում զոտտեխնիկական գիտության բնագավառի գիտելիքներին, վոր նրանք չեն տիրապետում մատղաշի (չորթերի, գառների, խոճկորների) ուցիտնալ դաստիարակության և բուժման տեխնիկային, վոր նրանք բավականաչափ ճիշտ չեն կարողանում կազմակերպել սոցիալիստական անասնապահության արտադրական պրոցեսը և կուլտուրական ձևով կառավարել սոցիալիստական անասնապահական տնտեսությունը:

85166 11 39438



Հետամնաց, մանր-գյուղացիական տնտեսութիւննից մնացած այդ ժառանգութիւնն այժմ հանդիսանում է կոլտնտեսական անասնապահական սպրանքային ֆերմաների կազմակերպչական-տնտեսական աշխատանքների գլխավոր խոչնդոտներից մեկը, մասնավորապէս մատղաշի բուծման և նրանց պահպանման կազմակերպման վերակէ բարձրացման բնագավառում:

Հենց աշխատանքի այդ բնագավառումն է, վոր թշնամին, հակակոլտնտեսական տարրերը փորձում են դիմադրութիւն ցույց տալ և խանգարել մեր հաղթական առաջընթացը:

Դրա համար ել սոցիալիստական անասնապահութեան բնագավառում նոր տեխնիկայի յուրացումը, մասնավորապէս սեփական աճի՝ մատղաշների պահպանման ուցիտնայ կազմակերպումը, վոր ապահովելու յետ սոցիալիստական հոտի ընդլայնված վերարտադրութիւնը—այժմ հանդիսանում է դասակարգային պայքարի կենտրոնական ասպարեզը գյուղում:

Ներկայումս անասնապահութեան բնագավառում նոր տեխնիկայի տիրապետման աշխատանքները կոլտնտեսականների և կոլտնտեսութիւնների ավելի ու ավելի լայն մասսաներ են ընդգրկում:

Կոլտնտեսութիւններում, սոցիալիստական անասնապահութեան տեխնիկայի տիրապետման վերարբայլ բարձրորակ անասնապահութեան սիրողների խմբակների ծավալվող լայն ցանցը հանդիսանում է ընկ. ՄՏԱ.ԻՆՆԻ, առաջավոր տեխնիկայի արտադրութեան մասին ցուցումների իրացման ամենալավագույն արտահայտութիւնը:

Մատղաշների (հորթերի, գառների և խոճկորների) բուծման և խնամքի տեխնիկայի մասին այս հրահանգը, հաստատված Հողօժողկոմատի Կոլեգիայի կողմից, նպատակ ունի անասնապահութեան ասպարեզում աշխատող յուրաքանչյուր առաջավոր կոլտնտեսականի և կոլտնտեսուհու ձեռքը տալ մատղաշի բուծման ու պահպանման տեխնիկայի և կազմակերպչական-տնտեսական աշխատանքների վերարբայլ գիտական հանրամատչելի մի գրքույկ:

Եւորիւմ այդ աշխատանքի և կոլտնտեսութիւնների բարձր յեկամտարբերութեան այս և հետագա տարիներում այս հիման վրա կոլտնտեսականների և կոլտնտեսուհիների արտադրական աւտիվութեան բարձրացումով, քաղբաժինների ղեկավարութեամբ խթանելով ավելի ազնիւ ու նվիրված կոլտնտեսական մասսաների ինքնագարծունեւթիւնը և իրականացնելով հոտի բազմացման ու ապրանքային արտադրանքի արտադրական պլանները կոլտնտեսութիւնները ձեռք կբերեն նոր ու անխընթաց հաղթանակներ սոցիալիստական անասնապահութեան բարձրացման և նրա ընդլայնված վերարտադրման ասպարեզում:

Ս. ԻՍԱՀԱԿՅԱՆ

## Մ ՇՐԻ ԿՈՎԻ ԿԵՐԱԿՐՈՒՄՆ ՈՒ ԽՆԱՄՔԸ

1. Հղի կովի կթելը պետք է դադարեցնել նրա ծնելուց 40—60 օր անց: Այդ ցամաքած շրջանի տեղում շուրջը ջահել և նիհար կովերի համար 2 ամսից պակաս չպետք է լինի:

2. Յեթե կաթի առատութունը դժվարացնում է կիթր դադարեցնել, ապա անհրաժեշտ է կրճատել որվա կթի քանակը, որարածնից դուրս դցել հյութալի կերերը և կրճատել ուժեղ կերերի որական բաժինը, իսկ հետո աստիճանաբար դադարեցնել կթելը: Կթելը դադարեցնելու և կովի ծնելու ժամանակը վորոշելու համար, կոլտնտեսական աշխատանքային յուրաքանչյուր ֆերմայում պետք է տարվին կովերի ծածկման գրանցումներ:

3. Հղիութան յերկրորդ կիսում (վերջին 120 օրը) անհրաժեշտ է, կենսապահ կերից բացի, հղի կովերին տալ նաև հավելյալ ձևով 0,8—1,2 կիլոգրամ ուժեղ կեր: Չահել կովերի համար այդ հավելումը կրկնապատկվում է:

Ուժեղ կերերի բացակայության դեպքում, հղիութան համար հավելումը կարող է ապահովվել տրվող խոտի բաժինը շատացնելով: Կովի 300 կգ. միջին կենդանի քաշի դեպքում, անհրաժեշտ է նրան, հիշյալ շրջանում, որական տալ 8—10 կր. միջին վորակի խոտ: Չկթվող հղի կովերին չպետք է կերակրել միմիայն դարմանով:

4. Կիթը դադարեցնելուց հետո, հղի կովերի հյութալի կերի որարածինը կարելի է կիսով չափ պակասեցնել: Ծնելուց 10—14 օր անց արմատապտուղների քանակը պետք է պակասեցնել և հասցնել մինչև 10 կիլոգրամ—մեկ որվա համար:

Միևուր, յեթե նա միանգամայն լավորակ չի, պետք է բոլորովին հանել որարածնից: Հղիութան վերջին օրերին պետք է հետևել կովի կրծին և յեթե նկատվում է կրծի ուժեղ ուռչում, վորն սպառնում է մասսիտով (կրծի հիվանդութուն), ապա հյութալի կերերը պետք է հանել հղի կովերի կերաբաժնից:

5. Վորպիս կանոն, հղի կովերը պետք է կերակրվեն միանգամայն լավ վորակի կերերով: Անկասկած, հղի կովերին չի կարելի տալ բորբոսնած, սառած և տաք կերեր, տաքացած կանաչ խոտ, մեծ քանակությամբ փրսչ (сотва) և ծլած կարտոֆիլ:

6. Հղի կովի որարածինն անհրաժեշտ և յուրաքանչյուր որսովելացնել 100-ական գրամ հանքային աղեր, բաղկացած հալասար քանակով կավիճի փոշուց, կերակրի աղից և ֆոսֆորաթրիփ-վային կրից կամ փոսկրալրից: Հանքային աղերը տրվում են ուժեղ կերերի հետ խառնած վիճակում, իսկ ուժեղ կերերի բացակայութեան դեպքում—առանձին:

**ՄԱՆՈՔՈՒԹՅՈՒՆ.**—Վոսկրայուրը պատրաստվում և սովորական փոսկրից, գրա համար անհրաժեշտ և փոսկորն այրել, մանր աղալ և անցկացնել մանր անցք ունեցող մազով:

7. Հղի կովերի համար պետք և սահմանված լինի հատուկ ուշադիր հսկողութեան: Պետք և ուշադրութեամբ հետևել, վորպեսզի կովերը չենթարկվեն հարվածների և ցնցումների: Արտային պահպանութեան ժամանակ անհրաժեշտ և խուսափել հոգնեցուցիչ ճամբորդութեանից հատկապես խիստ զառիվայր տեղերում: Անհրաժեշտ և նմանապես խուսափել հղի կովերին ճահճու տեղերում արածեցնելուց (վերջին 2—3 ամիսներում):

8. Հղի կովերին անհրաժեշտ և յուրաքանչյուր որ զբոսանել, բացառութեամբ ուժեղ քամուս, անձրևային և խիստ սառչապատ որերից: Գետինը սառուցով պատած ժամանակը հղի կովերին զբոսանքի չպիտի թողնել:

Զմեռը հղիութեան վերջին 60—90 օրերին, հղի կովերին չի կարելի ասանել ազդյուրից և ջրհորից ջուր տալու: Պետք և նրանց ջուր խմեցնել մուռում:

9. Մենուց 5—7 որ առաջ հղի կովերը տեղափոխվում են ծննդաբերական բաժանմունք, վորը հատկապես կահավորված և այդ նպատակի համար Շենքը պետք և լինի լուսավոր, մաքուր և չոր: Այն տեղերում, ուր ծննդաբերական բաժանմունք չկա, լնելու համար անասնանոցում առանձնացնում են շենքի վորոշ մասը:

10. Այն շենքերում, վորտեղ գտնվում են հղի կովերը, սահմանվում և սանիտարների կամ անասնապահների ցերեկային և գիշերային հերթապահութեան: Այդ հերթապահութեանը կազմակերպվում և ծնելուց 3—4 օր առաջ:

11. Մննդաբերական բաժնում գտնվող կովերը պետք և սպահովված լինեն թարմ, առատ և հարի՛ փռած ցամքաբով: Փտած, բորբոսնած, խոնավ և կեղտոտ ցամքաբն անպետք և հղի կովերի համար:

12. Ծնելուց հետո կովին պետք է ջուր խմեցնել ( $\frac{1}{2}$  դուլլ դոլ ջուր) և 3—4 ժամից հետո նրան տալ լավ խոտ: Նոր ծնած կովերին վոչ մի դեպքում չի թույլատրվում տանել աղբյուր կամ բաց ջրհորից ջրել: Պետք է նրանց ջուր խմեցնել մարում, ջրի ջերմաստիճանը պետք է միատեսակ լինի ծննդաբերական բաժնի ջերմաստիճանի հետ:

13. Կովի յուրաքանչյուր անգամ հորթատելուց, հիմք կա կասկածելու վորպես վարակիչ վիժուած: Նրան պետք է առանձնացնել և պահել առանձին շենքի մեջ (մեկուստարան):

Ծինի կամ սատկած հորթի վրա պետք է ածել կրակաթ կամ բորաթթվի 5% -ային լուծույթ և կամ կրեոլին, հորթին անմիջապես հեռացնել աղբարակի սահմաններից: Այն դոմը, վորտեղ տեղի յն ունեցել վիժուածը, պետք է մանրադննին կերպով ախտահանել կրով: Նկատի ունենալով վարակիչ վիժման տարածման վտանգը ամբողջ հոտի համար, բոլոր կասկածելի դեպքերում, պետք է անմիջապես հայտնել անասնաբուժին: Անասնաբուժը, պարզելով վիժման պատճառները, պետք է ցույց տա դրա դեմ կովելու միջոցները:

## II. ՀՈՐԹԵՐԻ ԽՆԱՄՔՆ ԱՌԱՋԻՆ 10—15 ՈՐՈՒՄ

Խնամքը յնով պահպանումը: 1. Կովի ծնելուց հետո անհրաժեշտ է նորածին հորթի բերանից և քթից հեռացնել լորձուկները մաքուր թանդիֆոմով, պորտից դուրս հանել արյունը, վորից հետո փոքից 10—15 սանտիմետր հեռավորութան վրա, հորթի պորտը պետք է կապել մաքուր, ամուր, յեռացրած կամ չվարակող լուծույթի մեջ թրջած բիրա թելով: Այս պետք է պորտը կտրել կապած տեղից ցածի մասից, և կտրած ծայրը քսել յող կամ կալիում մանգանցի 5% -ային լուծույթ:

3. Հորթը պետք է սրբել խնամքով և մաքուր փափուկ ծղնոտի խրձիկով կամ խոտով և անմիջապես տեղափոխել հորթանոց:

Նորածին հորթի խնամքի բոլոր աշխատանքները պետք է կատարվեն անպայման մաքուր լվացած և անվարակ դարձած ձեռքերով:

3. Նորածին հորթերին պետք է տեղավորել նրանց համար հատկացված հատուկ բաժնում (ընդունարան):

4. Յեթե նորածին հորթերի բաժանմունքը չի զտնվում ծննդարանի հետ մեկ տանիքի տակ, այլ տեղավորված է մի ուրիշ

շենքի մեջ, ապա ձմեռ ժամանակ հորթը պետք է տեղափոխել տաք պատգարակի (НОСИЛКА) մեջ: Այդ նպատակի համար յուրաքանչյուր ֆերմայում պետք է պատրաստել այդպիսի պատգարակներ:

5. Նորածին հորթերը պահվում են վանդակների մեջ, յուրաքանչյուր վանդակում մեկական գլուխ: Չպետք է թույլ տալ մի վանդակում պահել մի քանի հորթ, վորովհետև նրանք սովորութուն են դարձնում ծծել իրար ականջներն ու պորտերը, կուլ են տալիս բուրդը, վորն ընկնելով ստամոքսի մեջ՝ առաջ է բերում աղիքների բորբոքում:

Վանդակները պատրաստվում են մեկ մետր յերկարությամբ, մեկ մետր լայնությամբ և մեկ մետր բարձրությամբ:

Հորթանոցների մեջ յեղած վանդակները պետք է միջանցքներով անջատված լինեն դրսի պատերից: Մյուս վանդակների հետ կից պատերը պետք է լինեն անընդհատ, հանովի, խսկ դեպի միջանցքների կողմը՝ (ուղղածից պլանկաներից կամ ձողերից) կլորացրած յեզրերով: Վանդակի առաջին պատի մեջ պատրաստում են ցանցակերպ դռնակ, վորը մեջտեղից ունենում է անցք: Դռան ստորին մասի վրա, դրսի կողմից շաբոն երաների վրա կպցվում է մետաղի կամ փայտյա ող, նրա մեջ ջուր խմցնելու դույլը տեղափորելու համար: Վանդակում մտուրներ չեն շինվում:

6. Հորթանոց-ընդունարանում հորթերի պահելու և պահպանելու ամենամահրաժեշտ պայմանը պետք է լինի միջանցքի քամիների բացակայությունը, չորությունը, լավ ողափոխության առկայությունը և շենքի մեջ հավասար ջերմաստիճանի պահպանումը (10—12°C հատակի մոտ): Բարեխառնության խիստ տատանումները հորթանոցում կործանարար ազդեցություն են ունենում հորթերի վրա:

Հորթանոցը լուսավորող տարածությունը պետք է հորթանոցի հատակի տարածության մեկ տասներդականից պակաս չլինի, այսինքն՝ հատակի յուրաքանչյուր 10 ք. մետր տարածությունը պետք է մեկ քառ. մետր լուսամուտ լինի:

7. Հորթանոցների հատակն անպայման պետք է տախտակամած լինի: Յեթե հորթանոցի հատակը շինված է աղյուսից, ցեմենտից կամ նման այլ նյութերից, ապա անհրաժեշտ է պատրաստել հանովի փայտե ապահովիչներ (վահաններ) հատակին փոխելու համար: Հորթանոցները պետք է ապահովված լինեն միզատարներով և միզամբարներով. (жесточками и жижеприемниками):



9. Հորթանոց-ընդունարան կառուցելու և հորթերին խնամելու համար պահին կերպ պետք է ձգտել այն բանին, վորպեսզի հորթերը պայտպանված լինեն խոնավությունից, (վոչ միայն հատակը, այլ և ողի) վորովհետև խոնավությունը ֆուսակար է մատղաշների համար:

Վոչ մի դեպքում չի թույլատրվում հորթանոցում պատրաստել ջրի համար յեռման կուր: Սոնավությունից խուսափելու համար, ջրի համար վառարանը և յեռման կուրը պետք է խիստ առանձնացված լինեն հորթանոցից և տեղավորված կերի պատրաստման բաժնում:

9. Հորթերը գտնվում են հորթանոց-ընդունարանում մոր կաթով կերակրվելու ամբողջ ժամանակաշրջանում, այսինքն՝ վոչ պակաս 10—15 օր: Յեթե հորթն այդ ժամանակամիջոցում բավարար չափով չի կաղդուրվել, հիշյալ ժամկետը համապատասխանորար յերկարացվում է:

10. Հորթը պետք է միշտ ունենա լավ վորակով ծղնոտից չոր ցամքոց, վորը պետք է փոխվի որական մեկ անգամից վոչ սակավ և վորի քանակն որովա ընթացքում միջին հաշվով  $1\frac{1}{2}$  կիլոգրամից պակաս չպետք է լինի:

11. Հորթանոցում պետք է պահպանվի մշտական մաքրություն, վորի համար անհրաժեշտ է՝

ա) գոմաղբի և կեղտոտված ցամքոցի հեռացումը՝ որական յերկու անգամ.

բ) վանդակների կեղտոտ պատերի կանոնավոր լվանալը, միզատարների մաքրումը և միջանցքների լվացումն ու մաքրումը.

գ) հորթերի վանդակների սպիտակացում, կարիք յեղած չափով, բայց վոչ պակաս քան տասն օրը մեկ անգամ.

դ) հորթերի ամենօրյա մաքրումը խոզանակով, կեղտոտված մասերի տաք ջրով լվացումը և թաց տեղերն անպայման չոր շորով սրբելով:

12. Ամառը՝ տաք և լավ յեղանակներին, անպայման պետք է դուրս թողնել զբոսնելու: Հորթերի զբոսնելու համար հորթանոցի մոտ պետք է պատրաստել հատուկ փարախ:

13. Վարակը կաթի հետ ներս տանելուց նախազգուշանալու համար, կովի կուրծը, ամեն անգամ կթելուց առաջ, գոլ ջրով խնամքով լվացվում և և կաթի առաջին 2—3 ցայտունը կթվում առանձին ամանի մեջ և հորթերին չի տրվում:

14. Արգելվում է հորթերին խմեցնել ախտով, վարակիչ վիժումով և դարազով հիվանդ կովերի կաթը:

15. Նախքան հորթերին խմեցնելը և կովի կթելը պետք է ձեռքերը մաքուր լվանալ:

16. Անհրաժեշտ է խմեցնելուց հետո հորթերի դնչերը սրբել հատկապես այդ նպատակի համար նշանակված շորով:

17. Հորթերին խմեցնող աշխատավորների շորերը պետք է լինեն մաքուր:

18. Վարակը ներս տանելուց նախազգուշանալու նպատակով, առանց ֆերմայի վարիչի կարգադրուիթյան, բացի հորթերին սպասարկող անձնակազմից, վոչ վոքի չի թույլատրվում հորթանոց մտնել:

Հորթերի կերակրումը: 1. Մնվելուց 2—3 ժամ հետո, նորածին հորթերին պետք է խմեցնել թարմ, կթած  $C 38^{\circ}$ -ից վոչ պակաս շերմաստիճան ունեցող դալ:

2. Հորթերին դալը տրվում է որվա ընթացքում, — հավասար ժամանակամիջոցներում. 4—5 անգամ, մոտավորապես առավոտյան ժամի 4-ին, 10-ին, ցերեկվա ժամի 4-ին և յերեկոյան ժամի 9-ին: Առաջին որը տված դալի ընդհանուր քանակը, փոքրահասակ ցեղի հորթերի համար (ծնվելու ժամանակ 15—20 կլգ. կենդանի քաշով) պետք է լինի 2 լիտրից վոչ ավել, միջին ցեղի համար՝ (20—25 կլգ. կենդ. քաշ) 3 լիտր, խոշոր ցեղի համար՝ (35—40 կլգ. կենդ. քաշ) 3  $\frac{1}{2}$  — 4 լիտր:

3. Վորպես կանոն, հորթին մոր կաթը խմեցնում են 10 որից վոչ պակաս: Յեթե մայրը սատկել է, ապա պետք է տալ նույն որը ծնած այլ առողջ կովի կաթ:

4. Այն դեպքում, յերբ յերկամություն կա կաթի լավորակ լինելու մասին և կասկած կա նրա տուբերկուլյոզային բակտերիաներով վարակված լինելու մեջ, անհրաժեշտ է այդպիսի կաթը փոխարինել միանգամայն առողջ կովի կաթով: Յեթե չկան առողջ կթի կովեր, ապա անհրաժեշտ է կաթը պատերիզացիայի յենթարկել, այսինքն՝ տաքացնել մինչև  $C 80^{\circ}$  և այդ աստիճանում պահել 5 րոպե:

5. 10 որական հասակում հորթն աստիճանաբար փոխադրվում է յեռապատիկ կաթ տալուն:

6. Հորթերի խմեցնելու ժամանակ չպետք է թույլ տալ նրանց ամբողջ կաթը միանգամից խմելու, այլ անհրաժեշտ է

3—4 անգամ ընդհատել խմեցնելը, տալով հորթին թեկուզ բոսկոյական հանգիստ:

7. Հորթերին խմելու համար մաքուր և գոլ ջուր պետք է տալ նրան տրվելիք կաթի բաժինը պակասեցնելու մոմենտից (մոտավորապես 20 որական հասակից): Ջուրը տրվում է մաքուր վիճակում, կաթից և խտացած կերերից անջատ՝ ուժեղ կեր տալուց մեկ ժամ հետո:

Անոթներ (ամաններ): 1. Հորթերին խմեցնելու անոթները պետք է լինեն սպիտակ թիթեղից կամ ցինկապատ յերկաթից:

2. Ցանկալի յե յուրաքանչյուր հորթի համար ունենալ առանձին գույլ: Յեթե գույլերը ֆերմայում քիչ են, այդ դեպքում թույլատրվում է մեկ գույլից խմեցնել մի քանի առողջ հորթերի, անհրաժեշտ պայմանով, վոր յուրաքանչյուր հորթի խմելուց հետո, գույլը խնամքով լվացվի յեռման ջրով: Միևնույն գույլից խմող հորթերն անպայման պետք է առողջ լինեն:

3. Անոթը պետք է լինի կատարելապես մաքուր. դրա համար ամեն անգամ գործադրելուց հետո նախորդք վողողելով սառը ջրով, նրան պետք է խնամքով լվանալ յեռման ջրով մոխրաջրի հետ կամ սողայով (2—3<sup>0</sup>/<sub>0</sub>-ային լուծույթ) և չորացնել:

4. Կաթի և դալի ճիշտ չափուհների համար անհրաժեշտ է հորթանոցում ունենալ չափի գավաթներ (крыжки):

Կորբերի հիվանդացումը 1. Հորթանոցի մուտքի մոտ պետք է լինեն կանխելու մասին:

կրեոլինի կամ կարբոլյան թթվի 3<sup>0</sup>/<sub>0</sub>-ային լուծույթով թեշտեր՝ վոտնամանների ախտահանման համար:

2. Հիվանդ հորթերի պահպանման համար պետք է կառուցել հատուկ շենքեր (մեկուսարաններ):

3. Հորթապահները պետք է խիստ հետևեն հորթերի առողջ վիճակին: Հորթերի հիվանդանալու վերաբերյալ ամենափոքր կասկածն անգամ ունենալուց, անհրաժեշտ է վորոշել նրա ջերմաստիճանը և, այն դեպքում, յերբ ջերմաստիճանը C 39,5<sup>0</sup>-ից բարձր է, հորթը պետք է շտապ տեղափոխել հիվանդ հորթերի շենքը (մեկուսարան), վորտեղ պետք է սպասարկել և պահպանել խիստ առանձնացված ձևով:

4. Ախորժակի բացակայության, ուժեղ հազի առաջացման և բարձր ջերմաստիճան ունենալու դեպքերում (չոր, տաք, քթային խոցելի) հորթերը նույնպես առանձնացվում են առողջներից և տեղավորվում մեկուսարանում:

5. Փորլուծությամբ հիվանդացած հորթերին՝ պետք է ամենից առաջ մաքրել ստամոքսը: Ստամոքսը մաքրելու համար հորթին պետք է տալ լուծողական: Վորպես լուծողական կարող է ծառայել 60 գրամ արևածաղկի կամ կտավհատի յուղը, նմանապես և 50—60 գրամ գլաուբերյան աղը՝ խառնած <sup>1</sup>/<sub>18</sub> լիտր ցորենի թեփի կամ կտավհատի սերմերի յեփվածքի հետ: Սրա հետ միաժամանակ պակասեցնում են հորթին որական տրվելիք բաժնի չափը: Հետագա բուժումը պետք է կատարել միմիայն անասնաբուժական պերսոնալի ցուցմունքով:

6. Շնորհիվ նրան, վոր հիվանդ հորթերն արտադրում են մեծ քանակությամբ վարակիչ միկրոբներ (մանրեններ), վանդակը, մսուրը, արկղը, վորտեղ դտնվելիս է յեղել հիվանդ հորթը, այլ և այն բոլոր իրերը, վորոնց հետ շփվել և նա, պետք է յենթարկել մանրազննին մաքրման և ախտահանման:

ա) վանդակը, մսուրը, արկղը պետք է սրսկել կամ վրանածել  $20\%$ -ային թարմ-հանգցրած կրի լուծույթ:

բ) լավ յեռացնել խալաթը, սրբիչը և շորերը:

գ) դուլները և անոթները պետք է յեռացնել սողայի  $2-3\%$ -ային յեռացող լուծույթի մեջ:

7. Հորթանոցներում վարակիչ հիվանդությունների հանդես գալուց և նրա մեջ գտնվող հորթերի սատկելու դեպքերը շատանալու դեպքում, այնտեղ նոր ծնած հորթեր չպետք է տեղավորել, այլ նրանց համար, ժամանակավորապես, մինչև համաճարակի վերացնելը, պետք է հարմարեցնել ուրիշ շենքեր: Վոչ մի դեպքում վարակված հորթանոցից՝ վոչ մի իր, վոչ մի կենդանի, վոչ մի հորթապահ նոր հորթանոցը չի թույլատրվում տեղափոխել: Քամաճարակը վերացնելուց հետո, վարակված հորթանոցը խնամքով մաքրվում է կեղտերից և գոմաղբից, պատերը, հատակը, առաստաղը և վանդակը սպիտակացվում են անշեջ կրով, ին՝ վենաարը լվացվում է կրեոլինի  $5\%$ -ային լուծույթի մեջ, իսկ անոթները՝ խնամքով յեռացվում:

8. Նպատակ դնելով կանխելու հորթերի ցամաքաներ ուտելը, իրար ծծելը, կեղտոտ իրեր լիզելը և այն, ցանկալի յե գնչկալների կիրառումը հորթերի համար:

9. Դնչկալների ամենալավ ձևը—մետաղյա դնչկալներն են, վորոնք մի հորթի կողմից ոգտազործվելուց և մանրազննին ախտահանվելուց հետո կարող են գործադրվել նաև ուրիշ հորթերի համար:

Մետաղյա դնչկալների բացակայութեան դեպքում թույլատրվում է նաև դնչկալներ և այլ նյութից—ծիպոտներից, մատղաշ կեղևից, վորոնք անհրաժեշտութեան դեպքում, մեկ հորթի համար ոգտագործվելուց հետո, կարող են հեշտութեամբ վոչնչացվել:

10. Հորթերի դնչկալներ կրելու ժամկետը մոտավորապես տևում է 10—15 օր:

### III. ՀՈՐԹԵՐԻ ԽՆԱՄՔԸ 10—15 ՈՐԱԿԱՆ ՀԱՍԱԿԻՑ ՄԻՆՁԵՎ ԿԱԹՆԱՅԻՆ ՇՐՋԱՆԻ ՎԵՐՋԸ

1. 10—15 օրական հասակում հորթերը ծննդաբերական օրերը՝ բաժնին կից հորթանոցից փոխադրվում են հորթանոցի այլ բաժանմունք, վորը նախատեսված է հորթերին 5—6 ամիս պահելու համար:

2. Վորպես կանոն, հորթերը մինչև մեկ ամսական հասակը, վանդակներում պահվում են մեկական:

3. Մեկ ամսական հասակից հետո, թույլատրվում է առողջ հորթերի պահելն ընդհանուր խմբակային վանդակներում՝ յուրաքանչյուրի մեջ 4—5 դուլխ, բայց, պարտավորեցուցիչ պայմանով յուրաքանչյուր հորթին կերակրել առանձին: Խմրի մեջ են ընդգրկում ըստ հնարավորին, միևնույն հասակի և միատեսակ կենդանի քաշ ունեցող հորթերին:

4. Վանդակները հորթանոցում դասավորելու դեպքում, վերջիններս պետք է արտաքին սառն պատերից անջատված լինեն միջանցքով: Ընդվորում իրար կից վանդակների պատերը պետք է լինեն չընդհատվող, իսկ դեպի միջանցքը դարձած պատերը ցանցակերպ (ուղղաձիգ պլանկաներով կամ ձողով կլորացրած ծայրերով):

5. Վանդակների մեջ, դեպի միջանցքը դարձած պատի ներսի կողմից կողիտ կերերի համար պատրաստվում են մսուրներ: Մսուրները (КОРМУШКИ) խտացրած կերերի համար ցանկալի յե շինել հանովի, լվանալու և մաքրելու հարմարութեան համար: Սրանք ամրացվում են վանդակի առաջին պատի արտաքին կողմից:

6. Վանդակի մեծութունը մեկ հորթի համար պետք է լինի՝ յերկարութեամբ՝ 1,5 մետր, լայնութեամբ՝ 1,1 մետր և բարձրութեամբ՝ 1,2 մետր:

7. Խմբային պահպանութեան ժամանակ, վանդակների չափը վորոշվում է հորթերի քանակով՝ մեկ հորթին 2,0—2,5 քառ. մետրի հաշվով:

8. Խմբային պահպանման դեպքում, հորթերին անհատական (առանձին-առանձին) կերակրման նպատակով՝ վանդակի դեպք միջանցքը դարձած առաջին պատի ուղղածից պլանկաներն ամրացվում են միայն ներքին մասում և կարող են լայնացվել վերին մասում: Կաթով և խտացրած կերերով կերակրելու ժամանակ հորթի գլուխն ամրացվում է շարժական պլանկաների միջև:

Պլանկաներն ամրացվում են մեկը մյուսից 15-20 սանտ. հեռավորութեան վրա:

9. Դույլը կաթով կամ խտացրած կերով դրվում է կերակրելու անցքում և պետք է այնպես ամրացվի, վորպեսզի հորթը չկարողանա դույլի պարունակութունը թափել կամ շուռ տալ:

10. Հորթանոցի ջերմաստիճանը հատակի մոտ պետք է լինի C 10<sup>0</sup>-ից վոչ ցածր, ընդվորում ջերմաստիճանի խիստ տատանումներն անթույլատրելի յեն. ջերմաստիճանի թռիչքները և խոնավութունը հորթերի համար վնասակար են:

11. Հատակի պատրաստման, լուսավորութեան և ոդափոխութեան վերաբերյալ պահանջները նույնն են, ինչ վոր նորածին հորթերի հորթանոցի համար (տես § 6. բաժին II):

12. Վառարանը յեռման ջրի կուրբի հետ միասին պետք է լինի հորթանոցից դուրս:

Կերակրումը: 1. 10—15 որից հետո կարելի յե մայրական կաթից անցնել ընդհանուր կիթից կաթ տալուն, կազմակերպելով յեռապատիկ կերակրում՝ հավասար ժամանակամիջոցներում, խիստ պահպանելով կերակրելու ժամերը: Նայած տեղական պայմաններին և տարվա ժամանակին, տարբեր Ֆերմաներում կերակրելու ժամերը կարող են տարբեր լինել. կերակրման ժամերի մոտավոր դասավորութունը մուրալին շրջանում կարող է լինել այսպես. առաջին կերակրում առավոտյան ժամի 5—30 րոպ., յերկրորդը՝ ցերեկվա ժամի 1—30 րոպ. և յերրորդ կերակրումը՝ յերեկոյան ժամի 8—30 րոպեյին:

2. Խորհուրդ է տրվում լակտացիայի (կթելու) առաջին շրջանում գտնվողներից առանձնացնել կերակրող կովերի հատուկ խումբ: Կերակրող կովերը պետք է լինեն միանգամայն առողջ:

3. Կաթի ջերմաստիճանը խմեցնելու մոմենտին պետք է լինի  $C\ 35-39^{\circ}$ -ը:

4. Քաշած կաթը պետք է տալ յեղնելով տրվող անարատ կաթի քանակից, բայց հորթի քսան որական հասակից վոչ շուտ:

5. Այն դեպքում, յերբ հնարավոր չե տուրքերկուլյոզային կենդանիների քաշած կաթը փոխարինել առողջ կովի նույն տեսակի կաթով, անհրաժեշտ է պատերիդացիայի յենթարկել, ալսինքն՝ տաքացնել այն  $80^{\circ}$  ջերմաստիճանի տակ 5 բոպկյի ընթացքում:

6. Անարատ կաթից միմիայն քաշած կաթին անցնելը պետք է լինի աստիճանաբար և կատարվում է վոչ պակաս, քան 2 տասնորյակի ընթացքում:

7. Հորթի մեծանալու հետ զուգընթաց՝ աստիճանաբար իջեցվում են նաև կաթի և ջրի ջերմաստիճանը: 2 ամսական հորթին կաթը և ջուրը կարելի յե տալ  $C\ 30^{\circ}$ -ում, իսկ 3 ամսական հասակում՝  $C\ 20-25^{\circ}$ -ում: Հետագայում հորթերին կարելի յե խմեցնել սառը ջուր, բայց վոչ պակաս  $C\ 10-12^{\circ}$ -ից:

8. Ստացրած կերերն որաբաժնի մեջ մտցնում են՝ անարատ կաթի քանակի ավելացումը դադարեցնելու մոմենտից սկսած՝ մենակ անարատ կաթ խմեցնելու դեպքում: Իսկ կաթ և քաշած կաթ խմեցնելու դեպքում, սկսած որաբաժնի մեջ քաշած կաթը մտցնելու ժամանակից, բայց յերկու դեպքումն էլ վոչ ուշ հորթի քսան որական հասակից: Հորթերին տրվող խտացրած կերերը պետք է լինեն միանգամայն լավ վորակով, առանց բորբոսների, չնեխված և կողմնակի խառնուրդներով չկեղտոտված:

9. Ստացրած կերերն որաբաժնի մեջ պետք է մտցնել աստիճանաբար, վոչ շատ քանակով սկսած 50—100 գրամ ( $1/8$ -ից ֆունտ) և հետագայում աստիճանաբար ավելացնել:

10. Վարսակի ալյուրը կամ խոշոր աղած գարու ալյուրը, իսկ հետագայում նաև ուրիշ ուժեղ կերերը, տրվում են փոքր ինչ թրջած վիճակում:

11. Հորթերին խոտին ընտելացնելն սկսվում է 20 որական հասակից:

12. Հորթերի համար պետք է պատրաստված լինի հատուկ չոր խոտ, լավ վորակի—յերիտասարդ, քնքուշ, մինչև ծաղկելը կամ խոտերի ծաղկելու սկզբնական շրջանում հավաքած: Թիթեռնածաղիկ բույսերի խոտերը (յերեքնուկ, առվույտ, վիկա, կորընդան) պետք է հավաքել անպայման ծաղկելուց առաջ, յերբ խոտերի մեջ պարունակում է ամենաքիչ քանակով կոպիտ մասեր:

13. Արմատապտուղները հորթերի որաբաժնի մեջ են մտնում նրանց յերկու ամսական հասակից:

14. Սիւրսն որաբաժնի մեջ մտցվում է հորթի կյանքի 5-րդ ամսում: Հորթերի կերակրման համար կարող է գործածվել միայն լավ վորակի սիւսը, առանց վորեւ փչացած հատկանիշի և առանց սուր թթու հոտի:

15. Անարատ կաթ տալու քանակը քչացնելու ժամկետից սկսած անհրաժեշտ է հորթերին յուրաքանչյուր որ տալ հանքային աղեր՝ վոսկրակազմի աճման և ամրապնդման համար: Այդ նպատակի համար նրանց տրվում է կերակրի աղի, կալճի և վոսկրալյուրի խառնուրդ՝ հավասար մասերով: Սառնուրդի ընդհանուր քանակը՝ 10 գրամից սկսած, աստիճանաբար, հորթի 8 ամսական հասակում հասցնում են 35 գրամի:

Հանքային աղերը տրվում են խտացրած կերերի հետ խառնած գրությամբ:

Նեճամբը 1. Հնարավորության սահմաններում անհրաժեշտ է հորթերին ամառ ժամանակը յերկար պահել բացթիշա: Այդ նպատակի համար հորթանոցից վոչ հեռու պատրաստվում է փարախ (загон), վորի մեջ պետք է լինի քաշած ծածկ՝ շոգից և անձրեւից հորթերին պաշտպանելու համար:

Անհրաժեշտ է հորթերին այդպիսի փարախներում պահել ամբողջ ժամանակը, միայն կերակրելու և գիշերելու համար տանել հորթանոց: Հորթանոց պետք է տանել նաև անձրեւիային յեղանակներին և մեծ քանակութեանը բոռերի սոկայութեան դեպքում: Բացթիշա պահելը և արևի ուղղակի ճառագայթներով լուսավորելը ամբացնում է հորթերի որդանիզմները և ուժեղացնում աճումը:

2. Ձմեռ ժամանակը 10 որվան հասակից հորթերն անպայման պետք է ոգտվեն զբոսանքից՝ ընդարձակ փարախներում: Հորթերին պետք է զբոսանքին ընտելացնել աստիճանաբար՝ սկսած  $\frac{1}{2}$  ժամ տևողութեանից և հասցնել այն մինչև 2 ժամ: Շ 10<sup>0</sup>-ից ավելի ցրտութեան դեպքում և վատ յեղանակներին հորթերին զբոսանքի չպիտի տանել: Պետք է հակել, վոր զբոսանքի ժամանակ հորթերը չկանգնեն միևնյուն տեղում, այլ պետք է շարունակ շարժման մեջ լինեն:

3. Հորթերի կշռելը կատարվում է հետևյալ ժամկետներին.

1-ին կշռումը՝ ծնելուց 2 որից վոչ ուշ: 2-րդ կշռումը՝ 10—15 որից հետո, իսկ այնուհետև հորթերին պետք է կշռել յուրաքանչյուր ամիս:

Հորթերը կշռում են առավոտները՝ նախքան նրանց կերակրելը:

4. Ամեն մի հորթ պետք է ունենա իր համարը, վորի համար նա յենթարկվում է դրոշման (խարման) ողեր հանգցնելու կամ դաջելու միջոցով (դաջումը կատարվում է առանձնահատուկ գործիքի միջոցով համարակալելով ականջի կաշվի վրա):

Կորուստից ապահովելու նպատակով, ցեղական հորթերի համար յերկու ձևերն էլ միաժամանակ գործադրվում են:

#### IV. ՀՈՐԹԵՐԻ ԽՆԱՄՔԸ ԿԱՅՆԱՅԻՆ ՇՐՋԱՆԻՑ ՀԵՏՈ

1. Վորպես ընդհանուր կանոն, հորթերի բոլոր տեսակի պահպանութան ժամանակ, եզ հորթերը 6 ամսական հասակից առանձնացվում են արուններից:

2. Կաթնային շրջանից հետո հորթերին, 7—8 ամսական հասակում, մինչ նրանց կապելու մոմենտը, պահում են խմբային՝ վանդակում, առանձին հորթանոցում:

3. Կաթնային շրջանից հետո հորթերի շենքերի ջերմաստիճանը  $C^{\circ}$  8<sup>0</sup>-ից պակաս չպետք է լինի:


4. Կաթնային շրջանն անցկացրած հասակի հորթերի համար դրոսանքները միանգամայն անհրաժեշտ են:

Չորս ամսականից մեծ հորթերը, ամեն որ բաց են թողնվում դրոսանքի 4—5 ժամով, իսկ ամառ ժամանակը պահվում են ազատ դրում, հնարավորութայն դեպքում՝ ամբողջ որերով, բայց անպայման ծածկ ունեցող փարախում:

5. Որաբաժինները, վորպես ընդհանուր կանոն, կոպիտ կերերից դատ պետք է կազմված լինեն, հնարավորին չափ, բազմազան կերերից: Որաբաժնի մեջ անպայման պետք է մտցվեն խտացրած կերեր, հյութակալի (սելոս, արմատապտուղներ) կերեր և հանքային աղեր:

6. Մատղաշներին տրվող խոտը պիտի լինի լավ վորակի, հնձած ծաղկման շրջանում և յերկար ժամանակ չմնացած: Անթույլատրելի յե հորթերին կերակրել ճահճային թթու, քիչ հանքային աղեր և քիչ սննդանյութեր պարունակող խոտերով:

7. Տնտեսութայն մեջ խոտի պակասութայն դեպքում, որաբաժնի մեջ մտնող խոտի մի մասը կարելի յե փոխարինել գարնանացանի դարմանով կամ ձգնոտով: Դարմանն ու հարդը եզ հորթերի և ոգտագործելիք ցլիկների որաբաժնի մեջ են մտցվում



նրանց 8—9 ամսական հասակից վոչ շուտ: Գարու և ցորենի հարդը, վորպես մատղաշների կեր՝ պետքական չի: Յանկալի յե ցեղական ցլիկներին դարման և հարդ չտալ:

8. Ստացրած կերերը հորթերին տրվում են խառնուրդի ձևով: Արևածաղկի քուսպը տրվում է մանրացրած վիճակում, իսկ գարին և վարսակը՝ ջարդված կամ աղած՝ թեփի ձևով:

9. Կաթնալին շրջանում դանադան կերեր տալու ամենացանկալի կարգը կարող է լինել, մոտավորապես, հետևյալը՝ սկզբում տրվում է խտացրած կերերի խառնուրդը, ապա հյութալի կերը, խոտը, վորից հետո հորթին ջուր են խմեցնում:

10. Խմելու ջուրը տրվում է մաքուր վիճակում և որակաւն 2 անգամից վոչ սակավ: Ջրի ջերմաստիճանը պետք է հավասար լինի շենքի ջերմաստիճանին և լինի մաքուր ու թարմ:

## V. ՀՈՐԹԵՐԻ ԱՐՈՏԱՅԻՆ ՊԱՀՊԱՆՈՒՄԸ

1. Հորթերը պետք է ապահովված լինեն լավ և վոչ հեռու տեղ գտնվող արոտավայրերով, մեծ անասունների արոտավայրերից առանձին:

2. Մինչև 6 ամսական հասակը, հորթերն արոտային կերից բացի լրացուցիչ կերով ստանում են նաև անպայմանորեն խտացրած կերեր: Լրացուցիչ ձևով տրվող կերի քանակը կախված է արոտավայրի վորակից: Վեց ամսական և ավելի բարձր հասակում առատ արոտավայրի պայմաններում, մատղաշները կարող են յուրաքանչյուր ատանց լրացուցիչ կերի: Աղքատ արոտավայրի պայմաններում, հորթերը նմանապես պետք է ստանան լրացուցիչ կեր՝ թարմ հարած՝ կանաչ խոտի ձևով:

3. Արոտավայրը վոչ թե պետք է արածեցնել միանդալից, այլ անպայման մաս-մաս: Դրա համար արոտավայրը բաժանվում է մի քանի մասի, վորոնց քանակը վորոշվում է արոտավայրի մեծության, վորակի և հորթերի քանակի համաձայն, սակայն հողակտորների այդ քանակը 4-ից պակաս չպետք է լինի:

4. Յուրաքանչյուր արոտավայրի անհրաժեշտ պայմանն է հանդիսանում, նրա լավ ջրարբով (водопой) ապահովելը: Մոտիկ ջրաղբների բացակայության դեպքում, անհրաժեշտ է կազմակերպել նոր ջրարբի պատրաստումը:

5. Զերմությունից և անձրևներից հորթերին պաշտպանելու համար, անհրաժեշտ է կառուցել պաշտպանող ծածկեր, վոչ սլա-կաս 2 մետր բարձրութեամբ: Յեթե արոտավայրում կան ծառեր, նրանց անհրաժեշտ է սլահպանել, վորպեսզի հորթերը կարողանան ողավել նրանց ստվերից:

6. Յեթե արոտավայրերը գտնվում են հորթանոցից հեռու տեղում, ապա պետք է կազմակերպել հորթերի փարախային պահպանումը, վորի ժամանակ հորթերն ամբողջ որերով մնում են արոտավայրում: Հորթերին գիշերը տեղավորելու համար պատրաստում են ձածկ ունեցող փարախներ:

Սոված հորթերին ցողի ժամանակ չի կարելի թողնել արածելու յերեքնուկի և թիթեռնածաղկավոր բույսերի արոտավայրերում: Մեծ քանակով թիթեռնածաղիկ խոտերով կերակրվելը կարող է առաջ դրել վորուուուցք (տիմպանիա) և անասունների կորուստ:

Հարերի խնամք մոր ծծելու ժամանակ

1. Ապրանքային ֆերմաներում, հորթերին ձեռքից կաթ խմեցնելու հետ զուգընթաց կարելի յե խնամել նաև ծծելու ժամանակ:

Մնամքի այս ձևը կարող է տեղ ունենալ այն ֆերմաներում, վորտեղ դեռ հորթերի խնամման միջոցները չեն ապահոված պատշաճ սանիտարական պայմաններով:

2. Մնամման այս ձևի տեխնիկան կայանում է հետևյալում՝ գիշերը հորթերին անջատում են մայրերից և տեղավորում առանձին փարախներում: Հորթերին մորից անջատելու տևողությունը նրանց մեկ ամսական հասակում, պետք է լինի վոչ ավելի գիշերային 7—8 ժամից: Մինչև 2 ամսական հասակ ունեցող հորթերին առանձնացնում են 9—10 ժամով, իսկ 2 ամսականից ավելի մեծերին՝ 12 ժամով:

3. Առավոտները, կթելու սկզբում մի քանի բույսերով հորթերին բաց են թողնում իրենց մորը ծծելու, վորպեսզի կովերը կաթ տան, դրանից հետո հորթերը հետ են քաշվում և կովը կթվում է: Կովը կթելուց հետո, հորթերին նորից են թողնում իրենց մորը ծծելու:

4. Հորթերի հավասարաչափ կերակրումն ու նրանց զարգացումն ապահովելու համար, անհրաժեշտ է խմեցնել քաշած կաթ որական յուրաքանչյուրին տալով 2<sup>1</sup>/<sub>2</sub>-4 լիտր: Քաշած կաթը տրվում է՝ կաթը սերզատելուց անմիջապես հետո, C 30—35° ջերմաստիճանի ժամանակ: Մնամքի ամբողջ ժամանակա-

ըրջանում հորթին տրվում է 300—400 լիտր քաշած կաթ: Բացի այդ, այս ձևով խնամվող հորթերին անհրաժեշտ է կերակրել նաև ուժեղ կերերով, 5—6 ամսվա ընթացքում յուրաքանչյուր հորթին տալով 100—120 կգ: Մ որ տակ կ եր ա կ ր ու մ ը պետք է տևի 3—4 ամիս, իսկ առանց թորթի կթելը հնարավոր չլինելու դեպքում շարունակել մինչև կթելու շրջանի վերջը:

5. Առանց հորթերին կթելուն ընտելացնելը, անհրաժեշտ է սկսել յերինջներից և այնպիսի կովերից, վորոնք հիվանդագին յերեույթ չեն հայտնաբերում առանց հորթի կթելու ժամանակ:

6. Ծնելուց 1—2 ամիս առաջ, առանց հորթի կթելու յենթակա յերինջների կուրծք պետք է ամեն որ մասսօ անել՝ արհեստականորեն կատարել կթելու գործողության նման գործողություն և այլն, և այդպես շարունակել ամեն որ որական յերկու անգամ, սահմանված ժամերին, մինչև նրա ծնելու ժամանակ:

7. Ծնելուց հետո հորթին պետք է անմիջապես հեռացնել մորից ու խնամել նրան հրահանգի համաձայն (տես § II):

## VI. ԱՇԽԱՏԱՆՔԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ

1. Ֆերմաներին սպասարկող մշտական բրիգադների կազմից մատղաշների աճեցման համար պատասխանատու յեն հորթապահները, անասնապահ—կթողները և բրիգադիւրները:

Անասնապահ-կթողներն իրենց ամբարցրած կովերին նախապատրաստում են ծնելու համար, հսկում ծնելուն և պատասխանատվություն են կրում հորթի համար, նրա ծնվելու մոմենտից սկսած մինչև հորթապահներին հանձնելը:

Ամեն մի ֆերմա, տեղական պայմաններից յելնելով, պետք է վաղորոք վորոշի անասնապահ կթողների կողմից հորթերը հորթապահներին հանձնելու ժամանակն իրենց մոտ: Իսկ այդ նշանակում է վորոշել, թե թվ է պատասխանատու հորթերի համար՝ նրա ծննդյան առաջին օրին:

Յեթի ֆերմայում կարգ է ընդունված հորթերին՝ ծնելուց 10—15 օր հետո, հանձնել հորթապահներին՝ աճեցնելու համար, ապա անասնապահ կթողը լրիվ պատասխանատվություն է կրում այդ ժամանակաշրջանում հորթի աճեցման և այդ կանոնների կիրառման համար: Կանոնների մասին դրված է սույն հրահանգի հորթերի խնամքն օտային՝ 10—15 օրում՝ գլխում:

Ֆերմաներում ուր կիրառվում է հորթերի մո-

ը ը ծ ծ ե լ ու դ աս ս թ ի ար ա կ ու թ յ ու ն ը, ա ն ս աս ն ա պ ա հ-կ ը-  
թ ո ղ ը պ ա տ ա ս խ ա ն ա տ վ ու թ յ ու ն ե կ ը ու մ հ ո ը թ ի հ ա-  
մ ար ե կ ա տ ար ու մ ե ն ը ա ն դ աս ս թ ի ար ա կ ե լ ու, կ եր ա կ-  
ր ե լ ու և խ ն ա մ ե լ ու ը ո լ ո ը պ ար տ ա կ ա ն ու թ յ ու ն ն եր ը՝  
մ ի ն չ և հ ո ը թ ը մ ո ը թ ի ց կ ար ե լ ու մ ո մ ե ն տ ը:

Հ ո ը թ ա պ ա հ ն եր ը պ ա տ ա ս խ ա ն ա տ ու յ ն ն հ ո ը թ եր ի հ ա-  
մ ար, ն ը ա ն ց ա ն ս աս ն ա պ ա հ-կ թ ո ղ ն եր ի ց ս տ ա ն ա լ ու մ ո մ ե ն տ ի ց ս կ ս ա ծ-  
մ ի ն չ և հ ո ը թ եր ի ն՝ մ ա տ ղ ա շ ն եր ը խ ն ա մ ո ղ ա ն ս աս ն ա պ ա հ ն եր ի ն հ ա ն ձ-  
կ ը:

Հ ո ը թ ա պ ա հ ն եր ի պ ար տ ա կ ա ն ու թ յ ա ն մ ե ջ ե մ տ ն ու մ հ ո ը թ ե-  
ր ի ն կ եր ա կ եր ի լ ը, խ մ ե ց ն ե լ ը, մ ա ք եր ի լ ը, ն ը ա ն ց լ վ ա ն ա լ ը, մ ա ք ու ը-  
վ ի ճ ա կ ի մ ե ջ պ ա հ ե լ մ ս ու ը ու մ գ տ ն Վ ո ղ՝ հ ո ը թ եր ի ն խ մ ե ց ն ե լ ու մ ա մ-  
ն եր ը և ա յ ն:

Հ ո ը թ ա պ ա հ ն եր ը պ ե տ ք ե հ ե տ ե կ ն հ ո ը թ եր ի ա ո ղ ղ ջ ու թ յ ա ն ը,  
և հ ի վ ա ն ղ ու թ յ ա ն դ ե պ զ ու մ՝ շ տ ա պ հ ա լ տ ն ե ն բ ը ի գ ա ղ ի ը ի ն:

Հ ո ը թ ա պ ա հ ն եր ի պ ար տ ա կ ա ն ու թ յ ու ն ն եր ը պ ե տ ք ե կ ա տ ար-  
վ ե ն ա յ դ ա շ խ ա տ ա ն ք ի ն լ ա վ ծ ա ն ո թ և ա յ դ գ ո ը ծ ը ս ի ը ո ղ կ ա ն ա ն ց  
մ ի ջ ո ց ո վ:

Ի ը ի գ ա ղ ի ը ն եր ը, վ ո ը պ ե ս ֆ եր մ ա յ ու մ ար տ ա ղ ը ու թ յ ու ն ը կ ա զ-  
մ ա կ եր պ ո ղ ն եր ու դ ե կ ա վ ար ո ղ ն եր, պ ա տ ա ս խ ա ն ա տ ու յ ն ն ֆ եր մ ա-  
յ ու մ մ ա տ ղ ա շ ն եր ի լ ը ի վ պ ա հ պ ա ն մ ա ն ն ու կ ա ն ո ն ա վ ո ը ա ճ ե ց-  
մ ա ն ը:

Ա ը ո տ ա յ ի ն շ ը ջ ա ն ու մ, բ ա ց ի ֆ եր մ ա յ ի հ ի շ յ ա լ ա շ խ ա տ ա վ ո ը-  
ն եր ի ց, ար ո տ ա վ ա յ ու մ գ տ ն վ ե լ ու ժ ա մ ա ն ա կ ա մ ի ջ ո ց ի հ ա մ ար մ ա տ-  
ղ ա շ ն եր ի ա ճ ե ց մ ա ն ը պ ա տ ա ս խ ա ն ա տ ու յ ն ն ն ա և ն ա խ ր ա պ ա ն ն եր ը,  
վ ո ը ո ն ք պ ե տ ք ե հ ո ը թ եր ն ար ա ճ ե ց ն ե ն հ ա մ ա ձ ա յ ն ս ու յ ն  
հ ը ա հ ա ն ղ ի հ ի ն ղ եր ո ղ գ լ խ ու մ հ ի շ վ ա ծ կ ա ն ո ն ն եր ի, հ ե տ ե կ լ ո վ հ ո ը-  
թ եր ի ա ո ղ ղ ջ ու թ յ ա ն ը, և ն կ ա տ վ ա ծ բ ո լ ո ը հ ի վ ա ն ղ ու թ յ ու ն ն եր ի  
դ ե պ զ ը ու մ ա ն մ ի ջ ա պ ե ս հ ա յ տ ն ե ն բ ը ի գ ա ղ ի ը ի ն:

2. Հ ո ը թ եր ի ա ճ ե ց մ ա ն բ ե ո ն վ ա ծ ու թ յ ա ն ն ո ը մ ա ն եր ը մ ո տ ա-  
վ ո ը ա պ ե ս հ ե տ ե յ ա լ ը պ ի տ ի լ ի ն ի՝

Հ ո ը թ ա պ ա հ ն եր ի հ ա մ ար՝ մ ս ու ը ը ա յ ի ն և ար ո տ ա յ ի ն շ ը ջ ա ն ու մ  
20—25 հ ո ը թ:

Ա ն ս աս ն ա պ ա հ-կ թ ո ղ ն եր ի հ ա մ ար՝ ն ը ա ն ց ա մ ը ա ց ը ա ծ կ ո վ եր ի  
բ ո լ ո ը հ ո ը թ եր ը:

Տ ա վ ար ա ծ ն եր ի հ ա մ ար՝ 100 հ ո ը թ, ը ն ղ վ ո ը ու մ ա ն տ ա ո ղ ո-  
վ ա յ եր ու մ տ ա վ ար ա ծ ի ն ո ճ ն ե լ ու հ ա մ ար ա ո ճ ն ձ ն ա ց վ ու մ ե ն յ եր-  
կ ու յ ե ն թ ա տ ա վ ար ա ծ ն եր, ի ս կ տ ա փ ա ս տ ա ն ն եր ի դ ե պ զ ու մ՝ մ ե կ:

3. Մատղաշների աճեցման գործում աշխատող կուտնտեսականների աշխատանքը պետք է գնահատվի ՀՍԽՀ Հողօրդկոմատի կոլեգիայի 1933 թ. ապրիլի 11-ի վորոշման համաձայն՝ «դոլգատնտեսական զանազան աշխատանքների գնահատումը կուտնտեսություններում»:

Հորթապահների և անասնապահ-կթողների աշխատանքը, վորոնք ֆերմայում աշխատում են յերկրորդ տարին, այլև հովիվների աշխատանքը, որվա արտադրական նորման նրանց կողմից կատարելու դեպքում, գնահատվում է 3-րդ կարգով—1,0 աշխորով: Յեթե հորթապահը և անասնապահ-կթողը ֆերմայում աշխատում են առաջին տարին, ապա նրանց աշխատանքը պետք է գնահատվի 2-րդ կարգով—0,75 աշխորով:

Բրիգադիբրի աշխատանքը, վորը ֆերմայում աշխատում է առաջին տարին, գնահատվում է 4-րդ կարգով—1,25 աշխորով: Յեթե բրիգադիբրը ֆերմայում աշխատում է մեկ տարուց ավելի, ապա նրա աշխատանքը պետք է գնահատվի 5-րդ կարգով—1,5 աշխորով:

4. Ամեն մի ֆերմայում, յերնելով տեղական առանձնատեսակությունից և անասունի ցեղից, պետք է սահմանված լինեն մատղաշների աճեցման կենդանի քաշի ավելացման արտադրական նորմաներ—կիլոգրամներով: Որինակ՝ յեթե հորթապահն սպասարկում է 25 հորթի, վորոնցից յուրաքանչյուրն որական ալիս է 0,5 կիլոգրամ աճ, ապա տվյալ հորթապահի որական արտադրանքի նորման կլինի 12,5 կիլոգրամ՝ կենդանի քաշի աճ:

Յերնելով աշխատանքի և արտադրանքի նորմաների ընդունած գնահատությունից, պետք է սահմանել արտադրանքի գործարքային միավորի գնահատական—աշխորերով: Որինակ՝ յեթե հորթապահի աշխատանքը գնահատվում է 3-րդ կարգով—1,0 աշխորով, իսկ արտադրանքի նորման նրա մոտ 12,5 կիլոգրամ է, ապա յուրաքանչյուր կիլոգրամ աճի համար նրա վրա պետք է հաշվի 8 հարյուրերորդական աշխոր ( $100 : 12,5 = 0,08$ ):

Աշխորերի հաշվառումը պետք է կատարվի յուրաքանչյուր ամսի վերջին՝ հորթերը կռելուց հետո, համաձայն նրանց փաստական աճի:

5. Այն ֆերմաներում, ուր դժվար է կազմապերպել հորթերի կենդանի քաշի աճի կանոնավոր հաշվառումը, հողբաժնի համաձայնությամբ կարելի յի կիրառել գործարք, յուրաքանչյուր

գլուխ հորթի պահպանութեան և անեցման վերաբերյալ, հաշի առնելով անպայման հորթի չաղությունը:

Գործարքի այս ձևը կարելի չե կազմակերպել մոտավորապես հետևյալ կերպ՝

Մինչև 3 ամսական հասակը պահած յուրաքանչյուր հորթի համար, նրա նորմալ չաղութեան պայմաններում, հորթապահին, վորն աշխատում է յերկրորդ տարին, ամսական հաշվում է 1,2 աշխոր: 25 հորթով բեռնվածութեամբ դեպքում, մեկ հորթապահի ամսական վարձը, բոլոր հորթերի պահպանելու պայմանում, կարտահայտվի 30 աշխորով:

3-ից մինչև 6 ամսական հասակը յուրաքանչյուր հորթի պահպանութեան համար, նրա նորմալ չաղութեան դեպքում, առաջին տարին աշխատող հորթապահին ամսական հաշվում 0,75 աշխոր: 30 հորթով բեռնվածութեան դեպքում, բոլոր հորթերի պահպանման պայմանով, մեկ հորթապահն ամսվա ընթացքում ստանում է 22,5 աշխոր: Այն դեպքում, յերբ ֆերմայում կարգ է ընդունված, վոր ծնելուց հետո առաջին 10—15 օրվա ընթացքում հորթերին խմեցնեն անասնապահ-կթողները՝ ապա այդ ժամանակաշրջանի համար յուրաքանչյուր պահած հորթի համար անասնապահ-կթողի վրա պետք է հաշվել մինչև 5 աշխոր:

